ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔԵՇԻՇՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ

տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի

հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր Գոհար Վազգենի Վարդանյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վարդան Բաբկենի Բոստանջյան
	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արմեն Մամիկոնի Քթոյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայ-ռուսական սլավոնական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2020թ. հուլիսի 30-ին ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025. Երևան, Նալբանդյան փող., 128 շենք

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի հունիսի 18-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Գրիգորյան Լ.Հ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u> Անկախության տարիներից ի վեր Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումը և կայուն տնտեսական աճի ապահովումն այն առանցքային հիմնահարցն է, որի շուրջ մշակվել են բազմաթիվ ռազմավարական ծրագրեր: Տնտեսական աճի ապահովման առաջին նախադրյալներից է աշխատանքի շուկայի զարգացումը, որը ազգային անվտանգության տարրերից է: Վերջին տասնամյակում աշխատանքի շուկան կարգավորող օրենսդրական փոփոխությունները և պետության վարած սոցիալական քաղաքականությունն իրենց դրական ազդեցությունն են ունեցել աշխատանքի շուկայի ձևավորման և զարգացման գործում: Չնայած ՀՀ աշխատանքի շուկայում տեղ գտած բարեփոխումներին՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ՝ կապված գործազրկության մակարդակի՝ հատկապես երիտասարդների շրջանում, աշխատուժի տեղաբաշխման և աշխատանքային ռեսուրսների արտահոսքի հետ:

Աշխատանքի շուկայում տեղի ունեցող փոփոխություններն անմիջականորեն իրենց արտացոլումն են գտնում մակրոտնտեսական ցուցանիշների որակական և քանակական բնութագրերի վրա: Համաշխարհային տնտեսության մասշտաբով ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2009թ. գործազրկության մակարդակը կազմեց 8.4%, 2008թ-ի 6.1%-ի դիմաց, իսկ իրական ՀՆԱ-ի կրճատման տարեկան տեմպը՝ 3.9%[1]: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներից անմասն չմնաց նաև Հայաստանը: 2009 թ. գործազրկության մակարդակը նախորդ տարվա համեմատությամբ բարձրացավ 2.7%-ով, իսկ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդքեսը կազմեց 78.9%, 2018թ. 16.3% գործազրկության մակարդակի պայմաններում ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 105.2%: Ռեսուրսների սահմանափակությամբ օժտված և տնտեսաաշխարհագրական ոչ այդքան բարենպաստ դիրք ունեցող երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, գործազրկության մակարդակի նույնիսկ մեկ տոկոսով աճը տնտեսության մեջ առաջ է բերում նշանակալի վնասներ: Այս տեսանկյունից արդիական է գործազրկության աճի արդյունքում տնտեսությունում տեղ գտած վնասների գնահատումը, ինչպես նաև գործազրկությունը կրճատող գործոնների ուսումնասիրությունը: Կարևորվում է նաև գործազրկության մակարդակի վրա ազդող այնպիսի գործոնների ուսումնասիրությունը, ինչպիսիք են գործազուրկների միջին տարիքը, գործազրկության տևողությունը և դրանց զարգացման միտումների բացահայտումը:

Քանի որ ՀՀ Վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ ՎԿ) գործազրկությունը բնութագրող ցուցանիշները հրատարակում է ինչպես տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (այսու-

[1] “Global Employment Trends 2012” – copyright International Labour Organization.Geneva, ILO, . 2012, 1v., p.47

հետ՝ ՏՏԿԱՀ) նյութերով, այնպես էլ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Բնակչության զբաղվածության պետական գործակալության տրամադրած տվյալներով, ապա անհրաժեշտ է հիմնավորել դրանց միջև եղած տարբերությունների և տնտեսական աճը բնութագրող ցուցանիշների փոխկախվածությունը:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ աշխատանքի շուկայում գործազրկությունը բնութագրող ցուցանիշների, ինչպես նաև այն կրճատող գործոնների համալիր վիճակագրական վերլուծության միջոցով տնտեսական աճի վրա գործազրկության մակարդակի ազդեցության գնահատումն է:

Այդ նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Հետազոտել ըստ սեռատարիքային խմբերի և կրթական մակարդակի գործազուրկների կառուցվածքը և բացահայտել տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերը,
- Բացահայտել գործազուրկների տարիքի և անավարտ գործազրկության տևողության ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա,
- Ուսումնասիրել գործազրկության մակարդակը կրճատող և տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական աճն ապահովող աշխատանքի շուկայի հիմնական գործոնները,
- Բացահայտել տարբեր աղբյուրներից ստացված տվյալներով գործազրկության մակարդակների ազդեցությունը մակրոտնտեսական առանցքային ցուցանիշների վրա և հիմնավորել տնտեսական աճով պայմանավորված դրանց միջև եղած տարբերությունների օրինաչափությունները,
- Վերլուծել և գնահատել ՀՀ-ում բնակչության բարեկեցության վրա գործազրկության մակարդակի և տնտեսական աճի ցուցանիշների ազդեցությունը,
- Բացահայտել գործազրկության մակարդակի և տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշների միջև փոխադարձ կապը, դրանց դրսևորման առանձնահատկությունները ՀՀ մարզերի և ք. Երևանի կտրվածքով,
- Բացահայտել գործազրկությունը և տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշների ներտարեկան սեզոնային տատանումների առանձնահատկությունները և փոխկապվածության մեխանիզմները:

<u>Հետազոտության օբյեկտը և առարկան</u>: Հետազոտության օբյեկտը ՀՀ աշխատանքի շուկան է, իսկ հետազոտության առարկան գործազրկության ցուցանիշների համակարգն է, ինչպես նաև տնտեսական աճի վրա գործազրկության մակարդակի ազդեցության վերլուծության մեթոդները:

<u>Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը</u>: Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) առաջարկությունները, ՀՀ ՎԿ-ի մեթոդաբանական մշակումները, ինչպես նաև հետազոտվող թեմային նվիրված հայրենական և արտասահմանյան տնտեսագետների գիտական հրապարակումներն ու աշխատությունները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ՎԿ-ի ամսական և եռամսյակային տեղեկատվական զեկույցների, վիճակագրական ժողովածուների և տեղեկագրերի, միջազգային կազմակերպությունների (ԱՄԿ, Եվրոստատ և այլն) պաշտոնական վիճակագրական հրապարակումները, ինչպես նաև ՀՀ օրենքներն ու այլ իրավական ակտեր:

Ատենախոսության մեջ կիրառվել են վիճակագրական վերլուծության համալիր մեթոդներ, այն է՝ գրաֆիկական և աղյուսակային, բացարձակ, հարաբերական և միջին ցուցանիշների, վիճակագրական խմբավորումների, կառուցվածքային տեղաշարժերի ինտենսիվության, փոխկախվածությունների և ժամանակային շարքերի վերլուծության և կանխատեսման մեթոդները:

<u>Հետազոտության գիտական նորույթը</u>: Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացված վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Բացահայտվել է գործազուրկների տարիքի և անավարտ գործազրկության տևողության միջև եղած փոխադարձ կապը և հիմնավորվել է դրանց համատեղ ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա:
- Գնահատվել և կոռելյացիոն պլեյադաների միջոցով ներկայացվել է աշխատուժի առաջարկի և պահանջարկի հիմնական ցուցանիշների շղթայական ազդեցությունը գործազուրկների թվաքանակի և գործազրկության մակարդակի կրճատման և տնտեսական աճի ցուցանիշների վրա: ՀՆԱ-ի հիմքով հաշվարկման արդյունքում բացահայտվել է գործազրկության արդյունքում տնտեսության կրած վնասների չափը:
- Գործազրկության մակարդակի և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջև փոխկապվածությունների բացահայտման արդյունքում վեր է հանվել գործազրկության պաշտոնական և ՏՏԿԱՀ տվյալների միջև եղած տարբերությունների միջև եղած օրինաչափությունը:
- Տնտեսական կայուն զարգացման գնահատման ինտեգրալ ցուցանիշի (այնուհետև՝ SEDA) վրա գործազրկության մակարդակի և տնտեսական աճի ցուցանիշների ազդեցության վերլուծության ար-

դյունքում բացահայտվել է ՀՀ բնակչության բարեկեցության վրա նշված գործոնների ազդեցությունը:

- ՀՀ մարզերում և քաղաք Երևանում գործազուրկների թվի կառուցվածքային տեղաշարժերի հիման վրա գնահատվել է դրանց ինտենսիվության աստիճանը, ինչպես նաև բացահայտվել է գործազրկության մակարդակի և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև եղած փոխկախվածության առանձնահատկությունները:
- ՀՆԱ-ի ծավալների և գործազրկության մակարդակի փոխկապակցված շարքերի վերլուծության հիման վրա պարզաբանվել է սեզոնային տատանումների բնույթը, և ժամանակային շարքերի տարբեր բաղադրիչների հիման վրա տրվել են կանխատեսման միջակայքային գնահատականները առաջիկա տարիների համար:

<u>Ատենախոսության արդյունքների կիրառական և գործնական նշանակությունը:</u> Հետազոտության արդյունքներն ու եզրակացությունները կարող են կիրառվել ՀՀ ՎԿ-ի կողմից համապատասխան շրջանակներում իրականացվող ծրագրերում և հետազոտություններում, ՀՀ համապատասխան գերատեսչություններում, նախարարություններում: Դրանք կարող են տեղեկատվական նյութ հանդիսանալ տնտեսագետ-հետազոտողների համար, ովքեր զբաղվում են տվյալ հիմնախնդիրների ուսումնասիրություններով:

<u>Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:</u> Ատենախոսության արդյունքները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Տվյալագիտության ամբիոնի նիստերում, դրանք զեկուցվել են ազգային և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթները հրատարակվել են ատենախոսի կողմից հրատարակված շուրջ 10 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության տեքստը շարադրված է 159 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ատենախոսությունը պարունակում է 23 աղյուսակ, 21 գծապատկեր և 32 բանաձևեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, հետազոտության տեսական տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության գիտական նորույթը, արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Գործազրկության և տնտեսական աճի տեսական ու մեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացված են գործազրկությունը բնութագրող հիմնական ցուցանիշների համակարգը, ՀՀ Վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ) կողմից աշխատանքի շուկային վերաբերող տվյալների հավաքագրման մեթոդաբանությունն ու ստացման աղբյուրները, ինչպես նաև տնտեսական աճի, դրա հիմնական ցուցանիշների և գործազրկության մակարդակի փոխազդեցության տեսական հիմքերը: ՀՀ ՎԿ-ն աշխատաշուկայի զարգացումների վերաբերյալ տվյալները հավաքագրում է տարբեր աղբյուրներից ստացված ինտեգրացված տվյալների հիման վրա: Աշխատանքի շուկային վերաբերող պաշտոնական տվյալները տրամադրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը, որը ստեղծվել է 1992թ. հունվարի 27-ին ՀՀ կառավարության N55 որոշմամբ՝ «Զբաղվածության պետական ծառայություն» անվամբ: Այժմ գործակալության կառուցվածքում առանձնացված են մարզային կենտրոնները, գործում են 51 տարածքային կենտրոններ, որոնցից 10-ն ունեն մարզային կենտրոնների կարգավիճակ[2]: Երևան քաղաքում, ըստ համայնքների գործում են 10 տարածքային կենտրոններ[3]:

Ատենախոսության երկրորդ՝ **«Գործազրկության մակարդակի տնտեսավիճակագրական վերլուծությունը ՀՀ-ում»** գլխում ներկայացված է ՀՀ-ում գործազրկությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծությունը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված 2010 թ. 2008 թ. համեմատությամբ գործազուրկների թվաքանակը ավելացել է 46.6 հազար մարդով (20.1%-ով), իսկ պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը՝ 8.4 հազար մարդով (11.2 %-ով), ընդ որում այն պայմանավորված է եղել գործազուրկ կանանց թվի ավելացմամբ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում երկրում գրանցված տնտեսական աճի դանդաղեցմամբ պայմանավորված 2015 թ. 2013 թ. նկատմամբ գործազուրկների թիվը ավելացել է 19.1 հազար մարդով, իսկ 2016 թ. 2013 թ. նկատմամբ պաշտոնապես գրանացված գործազուրկների թիվը՝ 17.1 հազար մարդով: 2008-2017թթ. ՏՏԿԱՀ նյութերով գործազրկության մակարդակը 16.4%-ից հասել է 17.8%, այդ թվում՝ տղամարդկանց գործազրկության մակարդակը՝ 14.4%-ից 18.0%, կանանց գործազրկության մակարդակը 18.6%-ից կրճատվել է մինչև 17.5%: ՀՀ-ում պաշտոնական գործազրկության մակարդակը 2008թ. կազմել է 5.3%, 2017թ.՝ 6.2%: Ըստ կրթական մակարդակի գործազուրկների թվաքանակի բաշխման, կառուցվածքի և դինամիկայի վերլուծության համար

---

[2] http://employment.am/am/177/free.html

[3] Մենեջմենթ /տ.գ.դ., պրոֆ. Յու.Մ. Սուվարյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ (երկրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն).-Եր.: Տնտեսագետ, 2002-560էջ, էջ468

ՀՀ ՎԿ հրատարակած տվյալները վերախմբավորվել և ներկայացվել է 4 խմբերով (1.բարձրագույն, հետբուհական, 2. միջին մասնագիտական, նախամասնագիտական,3.միջնակարգ, ընդհանուր, 4.տարրական): 2008-2017 թթ. գործազուրկների կազմում բարձր տեսակարար կշիռ են ունեցել միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողները (37,9%-ից մինչև 42.3%-ի սահմաններում): Ընդհանուր գործազուրկների կազմում բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը 2008թ. կազմել է 21.5%, իսկ 2017թ.-ին ավելացել է 8.3 տոկոսային կետով: ՀՀ-ում պաշտոնապես գրանցված գործազուրկների ավելի քան 50%-ը ունեցել են միջնակարգ ընդհանուր, հատուկ ընդհանուր կրթություն: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ գործազուրկների կեսից ավելին գտնվում են 15-ից 34 տարեկանի սահմաններում: 2008թ.-ին գործազուրկների միջին տարիքը կազմել է 35.5 տարեկան (մոդայական տարիքը՝ 23.2 տարեկան), իսկ 2017թ.-ին այն ավելանացել է 2.2 տարով (մոդայական տարիքը՝ 29.5 տարեկան): Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին տարիքը ՏՏԿԱՀ նյութերով գործազուրկների միջին տարիքին գերազանցել է 4.3 տարով: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին և մոդայական տարիքների գերազանցումը ՏՏԿԱՀ տվյալներով հաշվարկված համանման ցուցանիշներին ցույց է տալիս, որ ՀՀ-ում բնակչության զբաղվածության կենտրոններ դիմողների գերակշիռ մասը գտնվել են 30 տարեկանից բարձր տարիքում: Գործազրկության մակարդակը պայմանավորող գործոններից է անավարտ գործազրկության տևողությունը: Վերլուծությունները ցույց են տվել, որ 2017թ. 2008թ. նկատմամբ ՏՏԿԱՀ նյութերով գործազուրկների անավարտ գործազրկության միջին տևողությունը 16.5 ամսից դարձել է 18.9 ամիս՝ ավելանալով 2.5 ամսով: Հաշվարկները ցույց են տվել, որ ՀՀ-ում 2008 թ. գործազուրկների կեսից ավելին աշխատանք է փնտրել 11.1 ամիս, 2017 թ.՝ 15.8 ամիս, գործազուրկ տղամարդկանց կեսից ավելին աշխատանք են փնտրել 2008 թ. 9.2 ամիս, իսկ 2017 թ.՝ 13.3 ամիս: 2008-2017թթ. գործազրկության մակարդակի վրա գործազուրկների միջին տարիքի և անավարտ գործազրկության տևողության փոխկապվածության ազդեցության վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ ՏՏԿԱՀ տվյալներով ՀՀ-ում 2008-2017 թթ. ընդամենը գործազուրկների մոդայական տարիքի մեկ տարով ավելացումը գործազրկության մակարդակը ավելացրել է 0.22 տոկոսային կետով, իսկ անավարտ գործազրկության մոդայական տևողության մեկ ամսով ավելացումը՝ 3.4 տոկոսային կետով: ՀՀ-ում պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին տարիքի մեկ տարով ավելացումը գործազրկության մակարդակը բարձրացրել է 0.26 տոկոսային կետով, իսկ անավարտ գործազրկության տևողության մեկ ամսով ավելացումը՝ 0.19 տոկոսային կետով:

Ատենախոսությունում վերլուծվել է ՏՏԿԱՀ և պաշտոնական գրանցված տվյալներով 2008-2017թթ ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի գործազուրկների թվաքանակի դինամիկան և կառուցվածքային տեղաշարժերը, ինչպես

նաև տրվել է դրանց ինտենսիվության աստիճանի գնահատականը: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2013-2017 թթ. գործազուրկների կառուցվածքային տեղաշարժերը համեմատաբար ավելի ինտենսիվ են եղել, քան 2008-2012 թթ.: Ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի պաշտոնապես գրանցված գործազուրկների կառուցվածքային տեղաշարժերը բնութագրվել են ինտենսիվության թույլ աստիճանով, պատկերը փոխվում է 2013-2017 թթ., երբ գրանցվել են բարձր ինտենսիվության աստիճանով գործազուրկների կառուցվածքային տեղաշարժեր: Այս երևույթը պայմանավորված է եղել քաղաքային բնակավայրերում բնակչության կենտրոնացվածության բարձր աստիճանով:

Ատենախոսության երրորդ՝ **«Տնտեսական աճի և գործազրկության մակարդակի միջև եղած փոխկախվածության տնտեսավիճակագրական վերլուծությունը»** գլխում ներկայացված է ՀՀ տնտեսության հիմնական ոլորտներում գործազրկությունը կրճատող և տնտեսական աճը խթանող գործոնների, ինչպես նաև գործազրկության մակարդակի և տնտեսական աճի հիմնական ցուցանիշների փոխկախվածության վիճակագրական վերլուծությունը: ՀՀ աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշների փոխկախվածությունը վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ 2008-2017 թթ. ՀՀ աշխատանքի շուկայում գործազուրկների թվի և աշխատուժի առաջարկի միջև ձևավորվել է ուղիղ, իսկ աշխատուժի պահանջարկի և գործազուրկների թվի միջև՝ հակադարձ միջին ուժգնության կապեր: Ուսումնասիրվող տարիներին ՀՀ տնտեսությունում աշխատանքով ապահովվածների և գործազուրկների թվի միջև գործնականում կապ չի ձևավորվել: Վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ 2008-2017 թթ. աշխատուժի պահանջարկի և աշխատանքով ապահովվածների թվի աճը էապես չի նպաստում գործազուրկների թվի կրճատման հետևյալ հիմնական պատճառներով.

- Աշխատուժի նկատմամբ պահանջների արագ փոփոխությունների արդյունքում աշխատանք փնտրողների մոտ ստեղծվում են դժվարություններ մասնագիտական կարողությունների զարգացման կամ նոր մասնագիտությունների յուրացման գործում:
- Մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձիք ոչ միշտ են համաձայնում միջին կամ միջինից ցածր աշխատավարձով զբաղեցնել թափուր աշխատատեղերը:

2008-2017 թթ. ՀՀ-ում, մի կողմից ՀՆԱ-ի ծավալների աճը դրականորեն ազդել է աշխատուժի պահանջարկի ձևավորման և գործազուրկների թվի կրճատման վրա, սակայն աշխատանքով ապահովվածների թվի և ՀՆԱ-ի ծավալների միջև ձևավորվել է թույլ կապ: Երկրում ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի և աշխատաշուկայի ցուցանիշների միջև ձևավորվել է թույլ և միջին ուժգնությամբ կապեր: Վերլուծությունները ցույց են տվել, աշխատանքով ապահովվածների թվի ավելացումը և գործազուրկների թվի

կրճատումը բավարար չափով չեն նպաստել ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի դրական տեղաշարժերին:

Գործազրկության վիճակագական մեթոդաբանության մեջ կարևոր նշանակություն ունի երկրի տնտեսությանը գործազրկության հասցրած վնասի չափը, որը հաշվարկվում է հասարակական աշխատանքի արտադրողականության և գործազուրկների միջին տարեկան թվի արտադրյալով[45]: Այն 2008թ. կազմել է 698.5 մլրդ. դրամ, 2017 թ.՝ 1205.5 մլրդ, դրամ: 2018 թ. 2017 թ. նկատմամբ կրճատվել է 40.0 մլրդ. դրամով կամ 3.3 %-ով:

2008-2018 թթ. գործազրկության մակարդակի և տնտեսական աճը արտացոլող ցուցանիշների միջև կապը ներկայացվել է ժամանակային գործոնը ընդգրկող էկոնոմետրիկ մոդելների միջոցով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի, ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի և գործազրկության մակարդակի միջև ռեգրեսիոն վերլուծության արդյունքները, 2008-2018 թթ. տվյալներով

Արդյունքային հատկանիշ	Ըստ ՏՏԿԱՀ-թյան տվյալներով գործազրկության մակարդակի	Ըստ պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակի
ՀՆԱ	$\hat{y}_t = 1961.6 - 60.9x_t + 97.6t$ $R = 0.992$, $R^2_{adj.} = 0.982$, $F = 274$	$\hat{y}_t = 1156.5 - 58.1x_t + 103.9t$ $R = 0.984$ $R^2_{adj.} = 0.961$, $F = 124$
ՀՆԱ-ի ֆիզ. ծավալի ինդեքս	$\hat{y}_t = 143.8 - 2.51x_t + 0.54t$ $R = 0.549$, $R^2_{adj.} = 0.128$, $F = 1.7$	$\hat{y}_t = 113.2 - 2.89x_t + 0.82t$ $R = 0.495$, $R^2_{adj.} = 0.056$, $F = 1.3$

Կառուցված ռեգրեսիոն մոդելի համաձայն, 2008-2018 թթ. ՀՀ-ում ՏՏԿԱՀ նյութերով, այլ հավասար պայմաններում, երբ զարգացման միտումների ազդեցությունը չեզոքացված է, գործազրկության մակարդակի մեկ տոկոսով կրճատումը նպաստել է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալների 60.9 հազար դրամով աճին, իսկ պաշտոնապես գրանացված գործազրկության մակարդակի դեպքում՝ 58.1 հազար դրամով աճին: ՏՏԿԱՀ նյութերով գործազրկության մակարդակի մեկ տոկոսով կրճատմանը համընթաց բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը ավելացել է 2.51 տոկոսային կետով, իսկ պաշտոնապես գրանցված գործազրկու-

---

4 Социально-экономическая статистика: Учебник для вызов. /под ред. проф. Б.И. Башкатова.-М.: ЮНИТИ-ДАНА, 2002, 703с, ст.234

5 2018թ. ՀՆԱ-ի միջին տարեկան արժեքը ընթացիկ շուկայական գներով կազմել է 6005.1 մլրդ. դրամ, զբաղվածների միջին տարեկան թիվը՝ 1073.8 հազար մարդ, հասարակական աշխատանքի արտադրողականությունը կլինի՝ 5.59 մլրդ. դրամ, գործազրկության հասցրած վնասը կազմել է 1165.5 մլրդ. դրամ (2008-2018թթ. հաշվարկները և ելակետային աղբյուրները տրված են ատենախոսության հավելված 36-ում):

թյան մակարդակի դեպքում՝ 2.89 տոկոսային կետով: Ներկայացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքներից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի փոփոխության վրա գործազրկության մակարդակի ազդեցությունը նշանակալի չի եղել: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող տարիներին ՏՏԿԱՀ նյութերով և պաշտոնական տվյալներով գործազրկության մակարդակների միջև եղած տարբերությունները ձեռք են բերել օրինաչափ բնույթ. առավելագույն տարբերությունը գրանցվել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին 2009-2011 թթ՝ 13.0-ից 13.3 տոկոսային կետ, իսկ նվազագույն տարբերությունը՝ ճգնաժամին նախորդող տարում՝ 2008 թ.՝ 11.1 տոկոսային կետ: Տնտեսական աճի պայմաններում ՏՏԿԱՀ նյութերով և պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակների միջև եղած տարբերությունները փոքրանում են:

Տնտեսական աճն անմիջականորեն արտացոլվում է սոցիալական ոլորտի ցուցանիշների համակարգում: 2012 թ Բոսթոնի խորհրդատվական խումբը (BCG) մշակեց Տնտեսական կայուն զարգացման գնահատման ցուցանիշը (այսուհետև՝ SEDA), որի նպատակն էր օգնել երկրներին ազգային ռազմավարական ծրագրերը մշակել բնակչության բարեկեցության համակողմանի և օբյեկտիվ գնահատականի հիման վրա:



Գծապատկեր 1 ՀՀ-ի SEDA ինտեգրալ ցուցանիշի արժեքները 2009-2018թթ. ըստ BCG-ի հաշվարկման արդյունքների[6]

Գծապատկեր 1-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ՀՀ-ում 2011-2012 թթ. SEDA ինտեգրալ ցուցանիշ նվազել է, իսկ հաջորդող տարիներին՝ բարձրացել: 2018 թ. 2009թ. համեմատությամբ SEDA ինտեգրալ ցուցանիշը բարձրացել է 1.6 միավորով: 2009-2018 թթ. ՀՀ-ում գործազրկության մակարդակի մեկ տոկոսով կրճատումը հանգեցրել է SEDA ինտեգրալ ցուցանիշի 0.16 միավորով բարձրացմանը: 2009-2018 թթ. ՀՀ-ում գործազրկության մակարդակի մեկ տոկոսով կրճատումը հանգեցրել է SEDA ինտեգրալ ցուցանիշի 0.16 միավորով աճին: Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում SEDA ինտեգրալ ցուցանիշի բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի

[6] "Striking a balance between well-being and growth. The 2018 sustainable economic development assessment" Boston Consulting Group 2018, p. 26

ֆիզիկական ծավալի ինդեքսի միջև ձևավորվել է հակադարձ և ոչ նշանակալի կապեր:

Աղյուսակ 2

ՀՀ-ում գործազրկության մակարդակի, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի, ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի և SEDA ինտեգրալ ցուցանիշի միջև ռեգրեսիոն վերլուծության արդյունքները 2009-2018 թթ. տվյալներով

Ցուցանիշներ	Արդյունքներ
Գործազրկության մակարդակի դեպքում	$\hat{y}_t = 52.7 - 0.16x_{1t} + 0.07t$ $R = 0.534$, $R^2 = 0.286$, $F = 1.39$
Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի դեպքում	$\hat{y}_t = 50.5 - 0.0009x_{2t} + 0.19t$ $R = 0.491$, $R^2 = 0.241$, $F = 1.11$
Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի դեպքում	$\hat{y}_t = 52.3 - 0.03x_{3t} + 0.13t$ $R = 0.544$, $R^2 = 0.296$, $F = 1.5$

ՀՆԱ-ն և ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը ունեցել են աճի միտումներ, որոնք չեն նպաստել SEDA ինտեգրալ ցուցանիշի ավելացմանը:

Աղյուսակ 3

ՀՀ մարզերում և քաղաք Երևանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և գործազրկության մակարդակի ռանգերի փոփոխության ինտենսիվության արդյունքները 2015-2017 թթ.

Ցուցանիշներ	Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն		Գործազրկության մակարդակ			
			ՏՏԿԱՀ տվյալներով		Պաշտոնապես գրանցված	
	2015-2016 թթ.	2016-2017 թթ.	2015-2016 թթ.	2016-2017 թթ.	2015-2016 թթ.	2016-2017 թթ.
Ռանգերի փոփոխության գծային գործակիցը	0.133	0.033	0.167	0	0.08	0.20
Ռանգերի փոփոխության քառակուսային գործակիցը	0.05	0.005	0.04	0	0.01	0.06

ՀՀ-ում տնտեսական աճի ապահովումն արդարացված է, եթե այն ենթադրում է մարզերի համաչափ զարգացում: Աղյուսակ 3-ում ներկայացված արդյունքներից երևում է, որ 2015-2016 թթ. ՀՀ մարզերում և ք. Երևանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ռանգերի միջև փոփոխությունները ավելի նկատելի են եղել, քան 2016-2017 թթ.: ՏՏԿԱՀ տվյալներով 2015-2016 թթ. ՀՀ մարզերում և ք. Երևանում գործազրկության մակարդակի ռանգերը կրել են որոշակի փոփոխություններ, իսկ 2016-2017 թթ. ռանգերը մնացել են անփո-

փոխ: Ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակի ռանգերի փոփոխությունները 2016-2017 թթ. կրել են ավելի ինտեսիվ բնույթ, քան 2015-2016թթ.:

Աղյուսակ 4

ՀՀ մարզերում և քաղաք Երևանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և գործազրկության մակարդակների ռանգերի միջև Սպիրմենի կոռելյացիայի գործակիցները

Տարիներ	ՏՏԿԱՀ տվյալներով	Պաշտոնապես գրանցված տվյալներով
2015 թ.	0.164 (0.49)	-0.577 (2.12)
2016 թ.	0.027 (0.08)	-0.673 (2.72)
2017 թ.	0.1 (0.3)	-0.667 (2.76)

(Փակագծերում նշված են t հայտանիշի հաշվարկային արժեքները, $t_{crit(\alpha=0.05;k=9)} = 2.262$*)*

Կատարված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ ուսումնասիրվող ցուցանիշների ռանգերի փոփոխությունների ինտենսիվության թույլ մակարդակը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում տարածաշրջանների զարգացման անհամաչափ տեմպերով: Աղյուսակ 4-ում ներկայացված վերլուծության արդյունքներից երևում է, որ 2015-2017 թթ. ՀՀ մարզերի և ք.Երևանի առումով բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և ՏՏԿԱՀ տվյալներով գործազրկության մակարդակների ռանգերի միջև կապը թույլ է, իսկ պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակների ռանգերի միջև՝ հակադարձ և ուժեղ:

2008-2018 թթ. ՀՆԱ-ի, ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի, գործազուրկների թվի և գործազրկության մակարդակի ներտարեկան եռամսյակային սեզոնային տատանումները ներկայացվել են ֆիկտիվ փոփոխականներով ադդիտիվ մոդելների օգնությամբ և հաշվարկվել են սեզոնային բաղադրիչները (աղյուսակ 5): 2008-2018 թթ. ՀՀ-ում սեզոնային բաղադրիչի ազդեցությամբ պայմանավորված առաջին և երկրորդ եռամսյակներում գործազուրկների թիվը և գործազրկության մակարդակը ավելացել են , իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալները՝ նվազել: 2008-2018 թթ. ՀՀ-ում երրորդ և չորրորդ եռամսյակներում գործազուրկների թիվը և գործազրկության մակարդակը նվազել են, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալները՝ ավելացել: ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը առաջին և երկրորդ եռամսյակներում ավելացել են 2.27 և 0.008 տոկոսային կետերով, իսկ երրորդ և չորրորդ եռամսյակներում նվազել է 1.19 և 1.16 տոկոսային կետերով[7]:

[7] ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի եռամսյակային տվյալների սեզոնային բաղադրիչները հաշվարկված են նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ:

Աղյուսակ 5

ՀՀ-ում ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի, գործազուրկների թվի և գործազրկության մակարդակի ներտարեկան տատանումների ռեգրեսիոն մոդելավորման արդյունքները (2009-2018 թթ. ըստ եռամսյակների)

Ցուցանիշներ	Արդյունքներ
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	$\hat{y}_{1t} = 977.2 + 17.09t - 583.3z_1 - 380.1z_2 - 27.2z_3 \quad F = 239.1$ $(32.1)\ (19.6)\ (18.6)\ (-12.2)\ (-0.87)$,
	$S_1 = -335.7$, $S_2 = -132.5$, $S_3 = 220.5$, $S_4 = 247.7$
ՀՆԱ-ի ֆիզ. ծավալի ինդեքս[8]	$\hat{y}_{2t} = 98.99 + 0.132t + 3.43z_1 + 1.25z_2 - 0.02z_3 \quad F = 1.02$ $(34.5)\ (1.61)\ (1.16)\ (0.43)\ (-0.008)$,
	$S_1 = 2.27$, $S_2 = 0.008$, $S_3 = -1.19$, $S_4 = -1.16$
Գործազուրկների թիվը	$\hat{y}_{3t} = 254.5 - 1.12t + 23.2z_1 + 16.5z_2 + 2.93z_3 \quad F = 8.14$ $(29.7)\ (-4.5)\ (2.6)\ (1.9)\ (0.33)$,
	$S_1 = 12.57$, $S_2 = 5.84$, $S_3 = -7.74$, $S_4 = -10.67$
Գործազրկության մակարդակը	$\hat{y}_{4t} = 17.24 - 0.009t + 1.65z_1 + 0.79z_2 - 0.26z_3 \quad F = 4.15$ $(33.2)\ (-0.65)\ (3.09)\ (1.49)\ (-0.49)$,
	$S_1 = 1.11$, $S_2 = 0.25$, $S_3 = -0.81$, $S_4 = -0.55$

$(t_{(\alpha=0.05;k=39)} = 2.02$, $F_{(\alpha=0.05;k1=4;k2=39)} = 2.61)$

Համաձայն կանխատեսումների, **այլ հավասար պայմաններում,** մինչև 2022 թթ. ըստ եռամսյակների գործազուրկների թիվը կունենա նվազման միտում, իսկ գործազրկության մակարդակը չի գերազանցի 20.9% (95% վստահելիությամբ): Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալները 2022 թ. կհասնեն 2379.5 հազար դրամի, իսկ նվազագույն սահմանը՝ 2149.8 հազար դրամի, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը կկազմի 108.1%, իսկ նվազագույն սահմանը՝ 90.1% (95% վստահելիությամբ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունում արծարծված խնդիրների լուծման շրջանակներում իրականացված վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները, որոնցից կցանկանայինք առանձնացնել հետևյալները.

- 2008-2017թթ. ՀՀ-ում ՏՏԿԱՀ արդյունքներով և պաշտոնապես գրանցված գործազրուրկների թվաքանակը բնութագրվել է անկայուն դինամիկայով. երկու անգամ գրանցվել է գործազուրկների թվաքանակի աճ, առաջինը պայմանավորված է եղել 2008-2010թթ. համաշխար-

[8] Հաշվարկված է տվյալ եռամսյակը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ:

հային ֆինանսատնտեսական ճգնաժամով, իսկ երկրորդը՝ 2014-2016թթ.-ին ՀՀ-ում տնտեսական աճի դանդաղեցմամբ:

- ՀՀ-ում պաշտոնական տվյալներով ուսումնասիրվող տարիներին, իսկ ՏՏԿԱՀ նյութերով 2008-2015թթ. կանանց գործազրկության մակարդակը գերազանցել է ընդամենը և տղամարդկանց գործազրկության մակարդակները: 2017թ.-ին 2008թ.-ի համեմատությամբ ընդամենը գործազրկության մակարդակը բարձրացել է 1.4 տոկոսային կետով (ըստ պաշտոնական աղբյուրների՝ 0.9 տոկոսային կետով), տղամարդկանց գործազրկության մակարդակը՝ 3.6 տոկոսային կետով (պաշտոնական տվյալներով՝ 1.5 տոկոսային կետով), իսկ կանանց գործազրկության մակարդակը նվազել է 1.1 տոկոսային կետով, ըստ պաշտոնական տվյալների՝ այն ավելացել է 0.2 տոկոսային կետով:
- Վերախմբավորման արդյունքում իրականացված վերլուծությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող գործազուրկների թիվը միջին հաշվով տարեկան ավելացել է 3.1%-ով, այդ թվում՝ գործազուրկ տղամարդկանց թիվը կամ 4.8%-ով, գործազուրկ կանանց թիվը 1.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ ԲՈՒՀ-երի կողմից տարբեր մասնագիտությունների գծով պատրաստված մասնագետների թվաքանակի և աշխատանքի շուկայում այդ մասնագիտությունների նկատմամբ ձևավորված պահանջարկի անհամապատասխանությամբ: Պաշտոնապես գրանցված գործազուրկների ավելի քան 50%-ը ունեցել են միջնակարգ ընդհանուր, հատուկ ընդհանուր կրթություն:
- Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ 2008-2017թթ. ընդամենը գործազուրկների (նաև ըստ սեռերի) կեսից ավելին գտնվում են 15-ից 34 տարեկան սահմաններում: 2008-2017թթ. պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվն ավելացել է 16-29 տարիքային խմբում, իսկ բարձր աճի տեմպ (122.8%) գրանցվել է 30-54 տարեկան գրանցված գործազուրկ տղամարդկանց խմբում: Ի տարբերություն պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին տարիքի, մոդայական տարիքը ունեցել է նվազման միտում, որը վկայում է պաշտոնապես գրանցված գործազուրկների տարիքի երիտասարդացման մասին:
- 2008-2017թթ. վերլուծությունները ցույց են տվել, որ ընդամենը գործազուրկների մոդայական տարիքի մեկ տարով ավելացմանը զուգընթաց անավարտ գործազրկության մոդայական տևողությունը ավելացել է 1.37 ամսով, պաշտոնապես գրանցված գործազուրկների դեպքում՝ 1.4 ամսով: Հաշվարկները ցույց են տվել, որ ընդամենը գործազուրկների աշխատանք փնտրելու մոդայական տևողությունը իր առավելագույն

մակարդակին հասել է 28.9 տարեկանում, պատոնապես գրանցված գործազուրկների դեպքում՝ 34.6 տարեկանում:

- Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ ՏՏԿԱՀ տվյալներով ՀՀ-ում 2008-2017թթ. գործազուրկների մոդայական տարիքի մեկ տարով ավելացումը գործազրկության մակարդակը ավելացրել է 0.22 տոկոսային կետով, իսկ անավարտ գործազրկության մոդայական տևողության մեկ ամսով ավելացումը՝ 3.4 տոկոսային կետով, պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին տարիքի մեկ տարով ավելացումը գործազրկության մակարդակը բարձրացրել է 0.26 տոկոսային կետով, իսկ անավարտ գործազրկության տևողության մեկ ամսով ավելացումը՝ 0.19 տոկոսային կետով:
- 2008-2017թթ. ՏՏԿԱՀ նյութերով և պաշտոնական տվյալներով ՀՀ մարզերում և քաղաք Երևանում գործազուրկների թիվը հիմնականում ունեցել է նվազման միտում: Հետազոտվող ժամանակահատվածում ՀՀ մարզերում և քաղաք Երևանում գործազուրկների թվի փոփոխության հետ զուգահեռ տեղ են գտել նաև կառուցվածքային տեղաշարժեր, ընդ որում՝ պաշտոնապես գրանցված տվյալներով դրանք եղել են ավելի ինտենսիվ և նշանակալի, քան ՏՏԿԱՀ-թյան արդյունքներով գործազուրկների դեպքում:
- ՀՀ-ում աշխատաշուկայի հիմնական ցուցանիշները փոխազդելով միմյանց վրա՝ նպաստում են գործազուրկների թվի կրճատմանը: Ստացված կոռելյացիայի գործակիցները փաստում են, որ աշխատուժի պահանջակի աճը կրճատում է աշխատուժի առաջարկը և գործազուրկների թիվը, որի արդյունքում ավելանում է աշխատանքով ապահովվածների թիվը:
- Մակրոտնտեսական և աշխատանքի շուկայի ցուցանիշների փոխկախվածության վերլուծությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում «ՀՆԱ-աշխատանքի շուկայի ցուցանիշներ - ՀՆԱ» կապը պահպանել է իր օրինաչափությունը, սակայն ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի և աշխատաշուկայի ցուցանիշների միջև այդ օրինաչափությունը չի պահպանվել (ձևավորվել են թույլ և միջին ուժգնությամբ կապեր):
- 2008-2017թթ. ավելացել է գործազրկության հետևանքով ՀՀ տնտեսության կրած վնասների չափը: Հաշվարկման հիմքում դնելով ՀՆԱ-ի մեծությունը (ընթացիկ շուկայական գներով)՝ 2008թ. վնասը կազմել է 689.5 մլրդ. դրամ, իսկ 2017թ. այն ավելացել է շուրջ 1.7 անգամ:
- Վերլուծությունները ցույց են տվել, որ 2008-2017թթ. ՀՀ-ում ՏՏԿԱՀ նյութերով և պաշտոնապես գրանցված տվյալներով, այլ հավասար պայմաններում, գործազրկության մակարդակի մեկ տոկոս կրճատումը հանգեցրել է համապատասխանաբար 64.5 հազար դրամ և 55.4 հազար դրամ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հազար դրա-

մով աճին, իսկ ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի՝ համապատասխանաբար՝ 3.13 և 3.0 տոկոսային կետով ավելացմանը:

- Վերլուծությունները ցույց են տվել, որ գործազրկության ուսումնասիրվող մակարդակների միջև առկա է ուժեղ կոռելյացիոն կապ ($r_{x1x2} = 0.548$), և դրանց միջև եղած տարբերությունները 2008-2017թթ. ձեռք են բերել օրինաչափ բնույթ: Այլ կերպ ասած, տնտեսական աճի պայմաններում մեղմանում է գործազրկության նշված երկու մակարդակների միջև եղած բևեռացումը:
- 2009-2018թթ. ՀՀ-ում գործազրկության մակարդակի մեկ տոկոսով կրճատումը հանգեցրել է SEDA ինտեգրալ ցուցանիշի 0.16 միավորով բարձրացմանը, սակայն բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի յուրաքանչյուր հազար դրամով ավելացմանը զուգընթաց SEDA ինտեգրալ ցուցանիշը նվազել է 0.0009 միավորով, իսկ ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի մեկ տոկոսային կետով ավելացման հետ զուգահեռ SEDA ինտեգրալ ցուցանիշը նվազել է 0.03 միավորով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը ունեցել են աճի միտումներ, սակայն դրանք գրեթե չեն նպաստել ՀՀ-ում բնակչության բարեկեցության բարձրացմանը:
- 2015-2016թթ. ՀՀ ՎԿ-ն առաջին անգամ հաշվարկել և հրատարակել է համախառն տարածաշրջանային արդյունքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի: Վերլուծության արդյունքները վկայել են, որ ՀՀ մարզերում և քաղաք Երևանում գործազրկության մակարդակների բևեռացումն ավելի ակնհայտ է, քան մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշի բևեռացումը, իսկ ռանգավորման արդյունքների վիճակագրական վերլուծությունները ցույց են տվել, որ 2015-2016թթ. ՀՀ մարզերում և ք. Երևանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալների և գործազրկության մակարդակի ցուցանիշների փոփոխությունները էական բնույթ չեն կրել:
- 2008-2018թթ. ըստ եռամսյակների գործազուրկների թվի 1.12 հազար մարդով և գործազրկության մակարդակի 0.009%-ով կրճատման միտումները զուգակցվել են բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալների 17.09 հազար դրամով և ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի 0.132 տոկոսային կետով ավելացմամբ, առանց սեզոնային և պատահականության բաղադրիչների ազդեցության: Վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում 2008-2018թթ. ըստ եռամսյակների գործազրկության մակարդակի կրճատման միտումները բավարար չափով չեն նպաստել ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի աճի միտումներին, որքան էլ որ գրանցվել է գործա-

զուրկների թվի նշանակալի կրճատման միտումներ և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալների զգալի աճի միտումներ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն հրապարակվել են հեղինակի հետևյալ աշխատություններում.

1. Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և գործազրկության մակարդակի միջև փոխկապվածության վիճակագրական վերլուծությունը ՀՀ տվյալներով. «Հայաստան Ֆիանսներ և էկոնոմիկա» #8 (148) օգոստոս, Երևան 2012 (էջ 58-60),
2. Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակի և ՀՆԱ-ի ծավալների ներտարեկան սեզոնային տատանումների վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով). Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ (գիտական աշխատանքների ժողովածու) Գիրք 6 Երևան «ՕՐ-ԴԱՐ» հրատարակչություն 2013 (էջ106 -116)
3. Գործազրկության վրա ազդող գործոնների համալիր վիճակագրական ուսումնասիրությունը ՀՀ տվյալներով. Ագրոգիտություն գիտական ամսագիր 9-10 (661-662) Երևան /2013 (էջ473-478)
4. Գործազրկության մակարդակների միջև տարբերությունների գնահատումը և կանխատեսումները պաշտոնական և ՏՏԿԱՀ նյութերով. «Հայաստան Ֆիանսներ և էկոնոմիկա» #1 (163) հունվար Երևան 2014 (էջ 56-57)
5. ՀՀ տնտեսության առանձին ճյուղերում գործազրկությունը կրճատող գործոնների տնտեսավիճակագրական վերլուծությունը. «Հայաստան Ֆիանսներ և էկոնոմիկա» #1 (163) հունվար Երևան 2014 (էջ 50-52)
6. The study of the influence of unemployment rate on the economic growth (based on officially registered data and integrated living conditions survey materials of NSS RA): Известия Национального Аграрного Университета Армении, Международный научный журнал 1(45) Åðåâàí 2014, ст.124-128
7. ՀՀ մարզերում բնակչության կենսամակարդակի հիմնական ցուցանիշների վրա գործազրկության ազդեցության վիճակագրական վերլուծությունը. Материалы международной научной конференции посвященной проблемам обеспечения безопасности и качества пищевых продуктов, Ереван, НАУА, 2017,стр.111-114
8. ՀՆԱ-ի և գործազրկության մակարդակի վիճակագրական վերլուծությունը ՀՀ մարզերում. «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» ՀԱԱՀ, միջազգային գիտական պարբերական, ISSN 2579-2822, էջ 64-68, Երևան2019
9. Գործազուրկների կառուցվածքային տեղաշարժերի վիճակագրական վերլուծությունն ըստ ՀՀ մարզերի և քաղաք Երևանի. «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» գիտական հոդվածների ժողովածու - 2019, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ ISSN 1829-4324, էջ 389-396, «Գիտություն» հրատարակչություն
10. Տնտեսական կայուն զարգացման գնահատման ցուցանիշը (SEDA) որպես բնակչության բարեկեցության չափման նոր եղանակ (ՀՀ տվյալներով) «Շիրակի պետական համալսարանի հանրապետական գիտաժողով» ՇՊՀ Գիտական տեղեկագիր 2019թ.-ի N2-ում, էջ,256-263

КЕШИШЯН ГЕВОРГ АРУТЮНОВИЧ

"Экономико-статистический анализ влияния уровни безработицы на экономический рост на примере РА"

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - “Финансы, бухгалтерский учет”.

РЕЗЮМЕ

Защита состоится 30-го июля 2020 года, в 14:00 на заседании Специализированного совета 014 ВАК по экономике, действующего в Армянском государсвтвенном экономическом университете, по адресу: г. Ереван, 0025, улица М. Налбандяна 128

Одной из первых предпосылок обеспечения экономического роста является развитие рынка труда как элемент национальной безопасности. На рынке труда РА за последнее десятилетие произошли реформы, но вместе с ними присутствует ряд проблем, связанных с уровнем безработицы (особенно среди молодежи), распределением рабочей силы, миграцией трудовых ресурсов. Для Армении, имеющей неблагоприятное географическое положение и ограниченные природные ресурсы, увеличение уровня безработицы даже на один процент приводит к весомому ущербу в экономике. Поэтому актуальна оценка ущерба экономики вследствие безработицы. Важно также изучение таких факторов, влияющих на уровень безработицы, как средний возраст безработицы, продолжительность безработицы и выявление тенденций развития этих показателей.

Основной целью диссертации является статистический анализ факторов, сокращающих безработицу на рынке труда РА и оценка влияния уровня безработицы на экономический рост.

Для достижения этой цели были предложены и решены следующие задачи:

- Изучить структуру безработицы по половозрастным группам населения и по уровню образования и выявить сдвиги, происходящие в указанных группах,
- Выявить влияние возраста безработных и длительности незавершенной безработицы на уровень безработицы,
- Изучить основные факторы рынка труда, сокращающие уровень безработицы и обеспечивающие экономический рост в разных сферах экономики,
- Расскрыть данными, полученным из разных источников, влияние уровня безработицы на ключевые макроэкономические показатели и обосновать закономерности различий между ними, обусловленные экономическим ростом,
- Анализировать и оценить влияние уровня безработицы и показателей экономичского роста на благосостояние населения РА,

- Выявить взаимосвязь, существующий между уровнем безработицы и основных показателей, характеризующих экономический рост, дать особенности их проявления в разрезе марзов РА и по городу Ереван,
- Расскрыть особенности внутригодовых сезонных колебаний и механизмы взаимосвязи основных показателей, характеризующие безработицу и экономический рост.

Объектом исследования является рынок труда РА. Предметом исследования является система показателей безработицы, а также методы анализа влияющие на экономический рост посредством уровня безработицы.

Научная новизна диссертационной работы состоит в следующем:

- Выявлена взаимосвязь между возрастом безработных и длительности незавершенной безработицы на уровень безработицы и обосновано их совместное влияние на него.
- Оценены и с помощью корреляционной плеяды показаны цепочное влияние показателей спроса и предложения рабочей силы на сокращение численности безработицы и на показатель экономического роста в экономике.В результате расчета на основе ВВП выявлены размеры ущербов, внесенной экономикой вследствие безработицы.
- В результате выявления взаимосвязей между уровнем безработицы и основными показателями, характеризующими экономический рост была расскрыта и обосновано закономерности разнличий между официальными данными уровней безработицы и материалами ИОУЖДХ.
- В результате анализа воздействия показателей уровня безработицы и экономического роста на интегральный показатель SEDA выявлена влияние указанных факторов на благосостояние населения РА.
- На основе структурных сдвигов в численности безработных в марзах РА и в городе Ереване оценена степень их интенсивности, а также была расскрыта особенности взаимозависимостей между уровнями безработных и ВВП в расчете на душу населения.
- На основе анализа взаимосвязанных временных рядов объемов ВВП и уровнем безработных была обоснована характер сезонных колебаний, и на основе различных компонентов временного ряда даны интервальные прогнозируемые оценки для предстоящих годов.

Практическая значимость работы заключается в том, что основные результаты исследования и полученные выводы могут быть использованы в практической деятельности Комитета статистики РА.

Научные результаты диссертации опубликованы в 10 научных статьях автора.

KESHISHYAN GEVORG HARUTYUN

"THE ECONOMICAL AND STATISTICAL ANALYSIS OF UNEMPLOYMENT RATE'S INFLUENCE ON THE ECONOMIC GROWTH BY THE EXAMPLE OF RA"

The abstract below is based on the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – "Finance, Accounting".

ANSTRACT

The defence of the diseration will take place on 30-th of July 2020 at 14:00 at the Meeting of the Specialized Council 014 in Economics of SCC of RA acting at Armenian state university of economics. Address: st.M. Nalbandyan 128, city Yerevan 0025, Republic of Armenia.

The first prerequisite of economic growth is the development of labor market as an element of national security. Despite of the implemented reforms at the labor market during recent decades there are still several problems connected with the unemployment rate, especially among the youth population, with the allocation of workforces and with the migration of labor resources. For Armenia that has an unfavorable geographical location and limited natural resources, increasing unemployment rate even by one percent leads to significant damages in economy. Therefore, it's actual to evaluate the damage size in economy due to unemployment. It's important to study the influence of those factors on the unemployment rate, such as the average age of unemployed and the average duration of non-ended unemployment. It's also necessary to study the tendency of mentioned indicators.

The main purpose of dissertation is the statistical analysis of those factors of labor market which reduce the unemployment rate and the evaluation of influence of unemployment rate on the economic growth.

To achieve this goal the following issues have been proposed:

- To study the structure of unemployed by the sex and age, and by the level of education and reveal the structural shifts in these groups.
- To discover the influence of the average age of unemployed and the average duration of none-ended unemployment on the unemployment rate.
- To explore the basic factors of the labor market, reducing unemployment and ensuring economic growth in different spheres of the economy.
- To disclose the influence of unemployment rates generating from different sources on the main indicators of economic growth and identify the regularity of their differences conditioned by economic growth.
- To analyze and estimate the influence of unemployment rate and the indicators of economic growth on the well-being of population RA.
- To discover the correlation and its revealing features between the unemployment rate and the main indicators of economic growth by the marzes of RA and city Yerevan.
- To discover the features of the quarterly seasonal fluctuations and correlated mechanizms between the indicators of unemployment and economic growth.

The object of the following research is the labor market of RA. The subject of the study was a set of indicators that characterize the labor market, and methods for studying the relationship between unemployment and the main indicators of the economic growth.

Scientific novelty of the thesis is as follows:

- identified the relationship between the average age of unemployed on the duration of none-ended unemployment, and also found out the influence of both indicators on the unemployment rate,
- evaluated and through the correlation pleiads demonstrated the influence of indicators of demand and supply of labor force on the reduction of unemployment and the gross value added in the economy. Revealed the extent of damage the economy as a result of unemployment,
- identified the correlation between unemployment rate and the main indicators of the economic growth and found out the regularities in the differences in unemployment rates between the official data and materials of HILCS.
- As a result of analysis of the influence of unemployment rate and indicators of economic growth on SEDA integral score disclosed the influence of mantioned factors on the well-being of population of RA.
- has been estimated the intensivity of structural shifts of unemployed in the marzes of RA and city Yerevan. Also has been disclosed the features of correlation between the unemployment rate and GDP per catita by the marzes of RA and city Yerevan
- disclosed relationship and characteristics of seasonal fluctuations of the unemployment rate and GDP. Through the components of time series of these phenomena the interval estimations of forecasting has been calculated for the forthcoming years.

The practical significance of this research lies in the fact that the main results of the study and the findings can be used in the practice of Statistic Committee of RA.

The scientific results of thesis have been published in 10 scientific articles of author.